

Ստեղծագործում են մեր ընթերցողները



Մերուժան Հակոբյանը (գրական անունը՝ Կայծեր) ծնվել է 1948 թվ. Արթիկ քաղաքում: Չորս տարեկանում տեղափոխվել են գյուղ Սառնաղբյուր, որտեղ էլ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1966 թ. զորակոչվել է ՍՍՀՄ բանակ: Այնուհետև ուսանել է Մինսկի զինվորական ուսումնարանում: Ավարտել է 1970 թ. և երեք տասնյակից ավելի ծառայել ՍՍՀՄ-ի տարբեր քաղաքներում՝ որպես ինքնաթիռների պրիբորիստ: Ստացել է բազմաթիվ պատվոգրեր, շնորհակալագրեր: Սիրում է իր ազգը, իր հայրենիքը, հպատ է, որ հայ է ծնվել: Ստեղծագործում է վաղ տարիքից: Նրա բանաստեղծությունները բազմաթիվ անգամներ տպագրվել են ՍՍՀՄ ամսագրերում:

Քնքուշ շոյեք, համբուրեք Ու պինդ գրկեք թոռնիկին: Իմ փոխարեն, իմ թոռնիկին, Երգեք ասեք, օրոր ասեք մեղմագին, Որ համբուրյոց գարունը գա Վարդեր բացվեն այտերին: Քանի տարի քեզ չեմ տեսել Հիմա արդեն մեծ ես դու, Քո փոխարեն լուսանկարը Կարծես գիրկս է գալու:

Ես ջահելների գովքը կգրեմ, Որ միշտ մեծերին սիրեն ու հարգեն

Հայելի

Դու հայելի, ջինջ ու մաքուր, Կանգնել եմ ես քո առաջ, Ջարմանում եմ՝ ինձ նայելով Թե, երբ այսպես ես ծերացա:

Մագերս սպիտակ տեսա հանկարծ, Դեմքիս վրա՝ կնճիռ ու փոս, Իսկ ճակատիս խոր-խոր ակոս, Չհասկացա, այս վիճակին ինչպես հասա:

Դու հայելի, ջինջ ու մաքուր, Գոնե խղճա, ջահել ցույց տուր, Ցույց ես տալիս տեղը տեղին Կպատումի ախ իմ հոռոգին:

Նամակ հուշերից

Կարդում եմ ահա նամակներդ լուռ, Որ թողեց իմ մեջ հազար ցավ, մոռուռ, Ջահել սիրտ լինի, թե լինի նա ծեր, Կտան այդ տողերն ահավոր ցավեր:

Հանգիստ չի տալիս ինձ մի խորը վիշտ, Ինչո՞ւ անպատճառ հեռացար ընդմիջտ, Գոնե ասեիր, սխալ եմ, թե ճիշտ, Նոր պատճառեիր այսքան ցավ ու վիշտ:

Անցել է հիմա երկար տարիներ, Այդ սիրո վերքը չի սպիացել,

Իմ տակած վարդին ուրիշն է տիրել, Ցավոտ նամակն է այսօր մնացել:

Չարն ու բարին

Չարը վիշտ է ու դառը դառնություն, Բարին կյանք է, երջանկություն, Չարից է միշտ բարին ծնվում Բարու հետ էլ չարն է ապրում:

Նրանք իրար հակամեն են, Բայց ողջ կյանքում իրար հետ են Չսիրեցին իրար երբեք, Ու իրարից անբաժան են:

Թե չլինի չարը հանկարծ Մարդը բարին ոնց հասկանա Բարու գալով երջանկացել Չարին այդտեղ է մոռացել:

Դու մարդ աստծո, եղիր բարի, Չարին քեզից միշտ վանի, Բարի գործով կապրես երկար, Չարին քեզ հետ երբեք մի տար:

Թե հանկարծ չարը քեզ կփաթաթվի, Կգան անհաջող ու դաժան օրեր, Քանի բարին կա, դու մի վշտանա, Դառը ցավերը երկար չեն մնա:

Մի մոռացեք մեր սուրբ խաչը, Համբուրում եմ Տիրոջ աչը

Հավատքն է միշտ վանում չարին Դա է միայն լավն ու բարին:

Իմ Սառնաղբյուր

Արագածի լանջին փոված Մանուշակներ գոտի կապած Պաղ աղբյուրները կարկաչելով Գովքը են երգում, իմ Սառնաղբյուր:

Վանից, Մուշից ենք մենք գաղթել, Թշնամու դեմ ճակատ տվել Մատուռ ու վանք ենք կառուցել Բաց երկնքի տակ թանգարան ես, իմ Սառնաղբյուր:

Ինչքան էլ որ գովքը երգեմ Գովելի ես, իմ Սառնաղբյուր, Հներից հին, բայց միշտ նոր ես Գեղեցիկ ես, իմ Սառնաղբյուր:

Մի իղձ ունեմ չկատարված Տեսնեմ սահմանը, դոները բաց, Գրկեմ պատերը գերի ընկած Մեր սուրբ Անին, Մուշին, Վանին:

Կարին մտնեք դիմ գունուկ, Մեր «Հայկական պար» լեռներով Հասնեք մեծ Մուշ, իջնեք Սասուն, Հանգստանան սրտեր բազում:

Մայրիկիս

Մայր իմ, անուշ ու անգին Կարոտել եմ քեզ այնքան, Լուսանկարդ իմ ձեռքին Ա~խ, այրում է իմ հոգին:

Հեռու եմ ես քեզանից, Քեզ այցելել չեմ կարող, Հոսեց արցունքն իմ աչքից, Սիրտս մնաց քեզ կարոտ:

Իմ կամքով չեմ հեռացել Դեպքերն են ինձ ստիպել Թեկուզ հեռու քեզանից Քեզ երբեք չեմ մոռացել:



Հայրենիքիս եմ կարոտել, Մեր հանդերին, հով սարերին, Քարափներին, ժեռ քարերին, Աղբյուրների քաղցր ջրին:

Հայրենիքիս եմ կարոտել, Բայց նա ինձնից հեռու մնաց, Մասիսիս պես ես կարոտից Արցունքն աչքիս սառած մնաց:

Թոռնիկիս

Հով քամիներ ու ջերմ արև, Տարեք բարև թոռնիկիս,

Գյուժարի հիշողության դափնեկիրները

Սուրեն Մատնիշյան



եմ, հուսով եմ կհաղթեմ ու մինչև Բեռլին աստավ կտանեմ»: Իրոք, այդպես էլ արել էր. հաղթանակի օրերին նա իր լուրմոտիվով Բեռլինում էր:

Ռոստովում կրկին հանդիպեցինք ու հարազատների պես գրկախառնվեցինք: 120 վազոնանոց գնացքը դարձյալ Սուրենն էր տանում: Արդեն երեկոյանում էր, երբ սուրացող գնացքը հանկարծ կտրուկ արգելակեց և հետո սուրաց: Բոլորս դուրս վազեցինք վազոններից դեպի շոգեքարշը, ուր Մատնիշյանը «տենդերի» հարթակին կանգնած պատմում էր. «Երբ «Մերսերշվիդների» ձայնն առա, անմիջապես ետ ընկրկեցի, որ ումբերից փրկվեի: Նրանք կարծում էին, որ ես կհայտնվեմ ումբերի տարափի տակ, թափեցին ու գնացին: Բոլորս փրկվեցինք, բայց երկաթուղին ու կամուրջը փլվեցին: Վերանորոգման համար երկու օր էր հարկավոր, իսկ մինչ Կուրսկ մնացել էր հիսուն կիլոմետր: Ոչինչ, ոտքով կգնանք»: Ես և Սուրենը կրկին գրկախառնվեցինք ու իրարից բաժանվեցինք: Մինչև հիմա ականջներումս է նրա ձայնը. «Տես, հա, պզտի ախպեր, վերադառնալիս իրար չմոռանանք, հանդիպենք, հիշենք ես օրերը»: Երբ պատերազմը վերջացավ, իմացա, որ աշխատում է Լենինգրադի երկաթուղում, ամուսնացել է և երկի չգա հայրենիք: Բայց 1948 թվականին վերադարձավ որպես շքանշանակիր մաշինիստ ու ընտրվեց պատգամավոր: Դեկտեմբերից շինվերանորոգման տրեսոր: Լենինգրադի գեղատեսիլ վայրերը մտապահած՝ նա զարկ տվեց քաղաքի բարեկարգմանը: 1968 թվականին նա ընտրվեց քաղխորհրդի գործկոմի նախագահ: Հենց սկզբից սովորություն դարձրեց ոտքով գնալ աշխատանքի, ճանապարհին ուսումնասիրել

քաղաքի վիճակը, լսել մարդկանց բողոքներն ու առաջարկությունները: Քաղաքաշինությունն արագ կարգով զարգացավ: Նա իր ձեռքով Լենինգրադի Մարսյան դաշտից անմար կրակ բերեց ու հրավառեց Աստղի հրապարակի Անհայտ զինվորի հուշարձանի կողքին: Հետո ձեռնամուխ եղավ մանկական երկաթուղու կառուցմանը: Մատնիշյանը, կենտրոնական հրապարակի շատրվանը բավարար չհամարելով, քաղաքի հյուսիսում կառուցեց յուրատիպ «երաժիշտ» շատրվան, որը դարձավ հանգըստի ու զբոսանքի գոտի: Հետագայում քաղաքապետը ձեռնարկեց մեծ կամրջի շինարարությունը, որն ավարտվեց Հայաստանի խորհրդայնացման հիսունամյակին և այդպես էլ կամուրջն անվանվեց: Մատնիշյանը նաև ծրագրեց «Մայր Հայաստան» մոնումենտի կառուցումը: Բացման արարողությանը տեսա նրան: Թեպետ ուղեգրով անգամ ավանդույթ էինք ողջ մնալու դեպքում հանդիպել իրար, բայց ես հեռվից էի ուրախանում նրա հաջողություններով ու կաշկանդվում էի հանդիպելու մտքից: Բայց այդ պահին հանկարծ Բերդի զինվորներից մեկից մի բակլաշկա խնդրեցի: Հո՞ծ բազմությունը ձեռքբերվե՞լ մոտեցա Մատնիշյանին ու բակլաշկան մեկնելով նրան, ասացի՝

- Շատ ծարավ եմ, մի բակլաշկա ջուր չեք տա... Սուրենը նախ զարմացավ, հետո՝ հարցրեց. - Բայաջարի՞, Կո՞րսկ: - Այո՞, այո: Նա անմիջապես գրկախառնվեց ու ինձ ներկայացրեց իր աշխատակազմին ու հյուրերին: - Ռազմաճակատային կրտսեր ընկերս է, այսօր եկել է հուշարձանի բացմանը մասնակցելու:



Պայմանավորվեցինք հետագայում հանդիպել ու բաժանվեցինք: Ռազմաճակատային ու աշխատանքային ծանրությունները տանելով՝ արդեն չորս զավակի հայր Սուրեն Մատնիշյանը տկարացավ: Քաղխորհրդի նախագահի նրա պաշտոնավարման յոթ տարիները շատ հրաշալիքներ պարգևեցին հայրենի քաղաքին: Նրա մահը սգաց ամբողջ քաղաքը: Չեմ կարծում, որ պատվախնդիր գյուժարեցին, արժանավոր մի կոթող կառուցելով, չի՞շի ու չասի՝ «Գործերիդ հետ դու էլ անմահացար, Սուրեն Մատնիշյան»: Հրատ Սարգսյան